<u>Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն</u>

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը տեղեկացնում է, որ ուսումնասիրել է Երևան քաղաքի ավագանու 2019 թվականի վերջին մի քանի նիստերը և, մասնավորապես, 2019թ դեկտեմբերի 25-ին գումարված արտահերթ նիստը՝ հանրային ծառայողի վարքագծի սկզբունքների պահպանման տեսանկյունից: Այս առնչությամբ Հանձնաժողովն արձանագրում է, որ նիստերի ընթացքում թույլ են տրվել վարքագծի սկզբունքների կոպիտ խախտումներ, մասնավորապես՝ Երևան քաղաքի ավագանու 2019թ դեկտեմբերի 25-ին գումարված արտահերթ նիստի ընթացքում հնչել են բազմաթիվ արտահայտություններ և որակումներ, որոնք համատեղելի չեն բարեկրթության և հարգալիրության սկզբունքների հետ, կոպտորեն խախտում են գործընկերների արժանապատվության նկատմամբ հարգանք դրսևորելու պահանջը: Մասնավորապես, ավագանու նիստում հնչել են այնպիսի արտահայտություններ, որոնք վիրավորում և նսեմացնում են մարդու արժանապատվությունը, օրինակ՝ «*քաղաքական անասնագողություն*», «*բարոյական օրինաչափություններից զուրկ*»՝ ընդգծելով հապավումը, մեջբերում հայտնի մանկական անեկդոտից, նշելով՝ «*մարդը իր կառիշնվի շորերը հագել էկել էր*», «*չեմ պատրաստվում սեղմել ձեր կեղտոտ ձեռքը*», «*դուք շատ փոքր մարդ եք*», «*դուք ոչ մեկ եք, որ հարցադրում անեք ավագանու անդամին*» և այլն: Հարկ ենք համարում ընդգծել, որ վերը նշված արտահայտություններն օգտագործվել են ակնհայտ վիրավորական ոճով և խախտել են ոչ միայն գործող իրավակարգավորումներով սահմանված հանրային ծառայողի վարքագծի սկզբունքները, այլև մեր հասարակության մեջ համընդհանուր ընդունված էթիկայի նորմերը:

Հաշվի առնելով վերը նշվածը, առաջարկում ենք՝

- Երևանի քաղաքապետին և ավագանուն՝ ձևավորել աշխատանքային խումբ, որը Հանձնաժողովի հետ առաջիկայում կմշակի համայնքային ծառայողի և ավագանու անդամի վարքագծի կանոններ,
- Երևանի քաղաքապետին և ավագանուն՝ «Հանրային ծառայության մասին» 2018թ մարտի 23-ի ՀՕ-206-Ն օրենքի 44-րդ հոդվածի և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի համաձայն ստեղծել էթիկայի հանձնաժողով, որը կապահովի ավագանու անդամների և/կամ քաղաքապետի կողմից էթիկայի կանոնների պահպանումը,
- Քաղաքական և վարչական պաշտոն զբաղեցնող բոլոր հանրային ծառայողներին, այդ թվում՝ Երևանի ավագանու անդամներին՝ պահպանել «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով սահմանված վարքագծի սկզբունքները:

Հանձնաժողովը հիշեցնում է, որ «Հանրային ծառայության մասին» 2018թ մարտի 23-ի (ՀՕ-206-Ն) օրենքի 22 և 25 հովածների համաձայն հանրային ծառայողները պարտավոր են դրսևորել **բարեկրթություն և հարգալիրություն,** ինչպես նաև **հարգանք իրենց վերադասների, անմիջական ղեկավարների, գործընկերների, ենթակաների արժանապատվության նկատմամբ:**